Կարգ

Հայկական Բժշկական ինստիտուտի <<լավագույն խումբ>> մրցույթի իրականացման

Նպատակ ունենալով բացահայտել և խրախուսել ՀԲԻ-ի ուսանողներին, ովքեր ցուցաբերում են բարձր առաջադիմություն և ուսումնական կարգապահություն, ինչպես նաև խթանել մրցակցությունը բուհի ուսանողների միջև, հայտարարվում է 2015-2016 ուս. տարվա մրցույթ Հայկական Բժշկական Ինստիտուտի <<**լավագույն խումբ**>> անվանակարգում:

- Մրցույթին կմասնակցեն ՀԲԻ-ի երկու ֆակուլտետների բակալավրիատի բոլոր կուրսերի խմբերը:
- Մրցույթի չափանիշներն են՝

ա/ ուսման առաջադիմություն՝ գնահատվում է 8-10 միավորներով:

10 միավոր – խմբի 30% գերազանց, 70% լավ առաջադիմություն
9 միավոր – խմբի 20% գերազանց, 80% լավ առաջադիմություն
8 միավոր – խմբի 10% գերազանց, 70% լավ, 20% բավ. առաջադիմություն

բ/ հաճախելիություն՝ գնահատվում է 6-7 միավորներով

7 միավոր-խմբի մինչև 5% բացակայություն
6 միավոր-խմբի մինչև 10% բացակայություն

գ/ գիտական ունակությունների դրսևորում՝ գնահատվում է 4-5 միավորներով:

5 միավոր- միջազգային հանրապետական գիտաժողովների մասնակցություն (զեկուցում, ելույթ, հրապարակված աշխատանք):
4 միավոր- ներբուհական գիտաժողովի մասնակցություն

դ/ Հասարակական ակտիվություն՝ գնահատվում է 1-3 միավորներով

3 միավոր- առավել շատ ներբուհական միջոցառումներ կազմակերպած խմբին, որի թեկնածուները անդամակցում են բուհի ուսանողական կառույցների և ներգրավված են դրանց աշխատանքներում:
2 միավոր- իրականացրել են տարբեր միջոցառումներ և առավել ներգրավված են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին:
1 միավոր- հարաբերական համեստ ներգրավվածություն ուսանողական աշխատանքներին:

- 2015-2016 ուս.տ. երկու կիսամյակների տվյալներով, մրցույթի արդյունքները կամփոփվեն հաջորդ ուս. տարվա սեպտեմբերին:
- Լավագույն ճանաչված խումբը կխրախուսվի ռեկտորատի կողմից:
- Մրցույթի հանձնաժողովի կազմում ներգրավված կլինեն բուհի ռեկտորը, ֆակուլտետների դեկանները, ուսումնական մասի ղեկավարությունը, ամբիոնների վարիչներ, ուս. խորհրդի ներկայացուցիչ:

25 նոյեմբերի 2015թ.

ՀԲԻ-ի ռեկտոր Լ.Գ.Ասատրյան